ՋՈՒԱՐՃԱԼԻՔ

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ

Աւանեայի Տիրակուհւոյ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման :

Հարցումն Ե. — Հաւք սպայիցն բաշխի այսպէս. չորրորդ մասն՝ պատուաւորացն, ութերորդ մասն՝ աւագացն և հարիւր յիսուն կենդինար այլ հեծելոցն: — Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ կենդինար լինի :

Լուծումն. — Լիցին 150 կենդինարն $=\text{ա}$, *և հաւքն* $=\text{բ}$. *յորմէ չորրորդ մասն նորին լինի* $\frac{\text{բ}}{4}$, *և ութերորդ մասն նորին* $\frac{\text{բ}}{8}$, *որք միանգամայն ընդ* $150=\text{ա}$ *կենդինարն պարտին հաւասար գոլ բովանդակ հաւից :*

Վասն որոյ

$$\frac{\text{բ}}{4}+\frac{\text{բ}}{8}+\text{ա}=\text{բ}.$$

և ջնջեալ զկոտորակսն մի առ մի բազմապատկելով զամենայն մասունս հաւասարմանն 'ի ձեռն հասարակաց յարանուանողին 8, գտանեմք

$$2\text{բ}+\text{բ}+8\text{ա}=8\text{բ}.$$

զոր վերածեալ և փոխադրեալ՝ գտանեմք

$$8\text{ա}=5\text{բ}$$

և բաժանեալ 'ի 5

$$\frac{8}{5}\text{ա}=\text{բ}:$$

Արդ որովհետև ըստ ենթադրութեանս է $\text{ա}=150$, *ապա* $240=150\times\frac{8}{5}=30\times8=\frac{8}{5}\text{ա}$, *և* $\text{բ}=\frac{8}{5}\text{ա}=150\times\frac{8}{5}=8\times30=240$. *և այս արտադրեալ ցուցանէ թէ լինի հաւք սպայիցն կենդինար երկու հարիւր քառասուն :*

Ստուգութիւն. — Ըստ հանգամանաց հարցմանս է

$$\frac{\text{բ}}{4}+\frac{\text{բ}}{8}+\text{ա}=\text{բ}.$$

արդ փոխանակելով զբ ընդ 240ից, որ է հաւք սպայիցն, գտանեմք լեալ չորրորդ մասին նորին

$$\frac{\text{բ}}{4}=\frac{240}{4}=60$$

ութերորդ մասն նորին

$$\frac{\text{բ}}{8}=\frac{240}{8}=30$$

որք միանգամայն ընդ կենդինարն	150
առնեն կենդինար	240

ԱՌԱԿ

Օձ ու Խարտոց :

Ժամագործին մօտ դըրացի օձ մը կար,
Ուսկից որ խեղճ մարդուն վախնալը կու գար.
Օր մը խանութ կը մանէ բան գողնալու,
Բայց հոն ուրիշ բան չըլլալով ուտելու՝
Պողպատ խարտոց մը խածնելու կը սկսի.
Դարձաւ ասի առանց բընաւ մէկ կըրքի՝
« Ողորմելի, ըսաւ, միտքդ ի՞նչ ես դըրեր.
Գիտե՞ս, քեզմէ շատ ուժովին ես դըպեր.
Խենդո՛ւկ օձիկ խելքըդ սիրեմ.
Դու սղկի մը չորսին մէկն ալ մարմնէս
Դեռ չկրծած՝ քու ակռաներդ կը կոտրես.
Ժամանակէն, գիտնաս, միայն կը վախեմ »:

Այս խրատ ըլլայ ձեզ, անպիտան ոգիներ
Որ կը նայիք միայն խածնել զուրիշներ.
Սակայն ձեր ջանքը փուճ կ'ելլան.
Ի՞նչ կը կարծէք, ձեր ակռաներն ի՞նչ կրնան
Այնչափ աղուոր գործոց վըրան.
Գիտնաք որ ձեր ակռաներուն
Դէմ ադամանդ պատ են անոնք հաստատուն :

ԼԱՖՈՆԴԷՆ

ԿԵՂԾԱԳՐՈՒԹԻՒՆ Ե.

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ